

զի բազում վարձք ունի Փափն եւ ողորմու-
 թիւն մին տարին : Ունի վէքիւ մի , որ տարին
 իմի զուռուչ կու բաշխէ . եւ վէքիւ մի այլ
 ունի , որ որբ աղջիկ կու կարգէ . որբ տղաք ⁴⁵
 զանահաթ կու տայ եւ սէրմիայ . եւ մէկ վէքիւ
 մի այլ ունի , որ մեծ սրիթալին վրայ է . վէ-
 քիւ մի ալ ունի , որ ուխտաւորաց եւ անկա-
 րաց ողորմութիւն բաշխէ քանի հազար հողոյ
 որ կու գան . վէքիւ մ'ալ ունին որ աշխարհա- ⁵⁰
 կան ժողովարարաց ողորմութիւն կու տայ :
 Վէքիւ մ'ալ ունի , որ կարգաւորաց ժողովք
 կու տայ , եպիսկոպոսաց , քահանայից , սար-
 կաւազաց . եւ տես թէ տարին քանի հազար
 եպիսկոպոս միայն կու գայ . թող զայլ ՀԲ աղ- ⁵⁵
 զացն : Որպէս տարի մի եկել էր Ասորու
 պատրիարգ ի Համթայ , ի Տաճկացն փախու-
 ցեալ վասն ուղղափառ հաւատոյն . եւ ետ նմա
 հազար զուռուչ եւ զային առաւ շաբաթն եղ
 մի , իրեք ոչխար , յիսուն հաւ , հինգ մէտրայ ⁶⁰
 զինի , օրն տասն հաց , քացախն , աղն , սավղն
 եւ այլն : Նոյնպէս հոռմի այլ բազումք կու
 դան : Իսկ Հայոց ամէն տարի հինգ , վեց եպիս-
 կոպոս , վարդապետք . թող զշատաչքիկ հա-
 բեղայքն եւ զիրիցնին : Զատ զայն երբեմն ⁶⁵
 երբեմն եւ թագաւորացն օգնութիւն կ'ու-
 ղարկէ : Զորս կամիմ սակաւ ինչ ծանուցանել
 լսողացդ . բայց աղաչեմ սիրով ունին դնել
 բանիցս եւ մի ձանձրանալ :

46 տա : — 48 յանկարաց : — 51, 53 տա փախ
 վարը յախախ : — 57 պատրիարգ : — 58 ուղափառ . . . նմայ :
 — 65—66 Երբ եմ : — 67 ինձ :